ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Տեքստի հետ աշխատելու մեթոդները մայրենիի դասաժամին

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ ԿԱՐԻՆԵ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Կարդալու կարողության ձևավորումը……4

Շվեյցարական տոն……6

Եզրակացություններ ……14

Օգտագործած գրականության ցանկ……15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ժամանակակից ուսուցիչը պետք է կարողանա կիրառել տարբեր տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ, հմտորեն համատեղի դրանք ըստ սահմանված մեթոդաբանական առաջադրանքի:

Հաճախ ուսուցիչները ընթերցանության հմտությունների զարգացման ժամանակ բախվում են ցածր մոտիվացիայի խնդրին, ուստի անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հետաքրքիր կդարձնեն ընթերցումը:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է՝**

- Ներկայացնել ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ տեքստի հետ աշխատելու ձևերն ու եղանակները:

**Աշխատանքի խնդիրներն են՝**

- ուսումնասիրել տեքստի հետ աշխատելու ինտերակտիվ մեթոդների կիրառման առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել տեքստի հետ աշխատելիս ծագած դժվարությունները, ինչում են կայանում դրանք:
- Անցկացնել գործնական հետազոտություն՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ:

**Հետազոտության տեսական նշանակությունն է ներկայացնել,** որ այսօր ուսուցչի խնդիրը ավելի շատ աշակերտների գործունեության նպատակաուղղումն է, սովորել սովորեցնելը, քան միայն գիտելիքներ հաղորդելը, քանի որ միայն ուսուցման ընթացքում հնարավոր չէ այնքան տեղեկություն փոխանցել և սովորեցնել, որքան անհրաժեշտ է նրա զարգացման համար: Ուստի, այսօր համար մեկ նպատակը, գրքից օգտվելու կարողության ձևավորումն է:

**Հետազոտության գործնական նշանակությունն է ցույց տալ** այն ուղիները և միջոցները, որոնք աշակերտներին ընթերցասեր կդարձնեն:

## ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կարդալու կարողության ձևավորման առաջին աստիճանի հաղթահարումից հետո անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ ծավալել սկսնակ ընթերցողների մեջ կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքների հիմնական նպատակը սովորողների մեջ կարճ ժամանակում հնարավորինս շատ և հիմնարար տեղեկության ձեռքբերման կարողության ձևավորումն ու զարգացումն է, քանի որ կարդալու կարողությունն այսօր ոչ թե նպատակ, այլ միջոց է՝ նոր գիտելիքների և տեղեկատվության ձեռքբերման համար:

Տարրական դպրոցում ընթերցողական կարողությունների ձևավորումն իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդով, որը հայ դպրոցում գործածվել է դեռևս Խ. Աբովյանի կողմից: Հետագայում այն նշանավոր շատ մեթոդիստ-մանկավարժների կողմից մշակվել, կատարելագործվել է՝ դառնալով բնագրերի շուրջ տարվող բազմաշերտ և բազմակողմանի աշխատանքների իրականացման մի կուռ համակարգ:
Այսօր էլ մայրենի լեզվի ընթերցարաններում տեղ գտած նյութերը սովորողների կողմից ուսումնասիրվում են հիմնականում բացատրական ընթերցանության մեթոդով: Շատ ուսուցիչներ որոշ փոփոխություններ, լրացումներ են կատարում մեթոդի մեջ՝ երբեմն էլ համադրելով այն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդների կամ դրանց առանձին տարրերի հետ: Օրինակ, հաճախակի են կիրառվում Կանխագուշակումներով կարդալը, Փոխգործուն նշանների համակարգը, Կմախքը, Երեք կողպեք՝ մեկ բանալի և այլ մեթոդներ: Կարելի է ասել, որ այս մեթոդներն, իհարկե, տալիս են իրենց դրական արդյունքը, սակայն, ավելի շատ կոսմետիկ փոփոխություններ են իրականացնում սովորողների մեջ կարդալու որակի բարձրացմանո ւղղությամբ տարվող աշխատանքներում:

Ըստ գիտական աղբյուրների՝ յուրաքանչյուր դարաշրջան ենթադրում է իր մեթոդներն ու ընթերցանության եղանակները: Ուսուցման մեթոդը շատ բարդ ու երկիմաստ հայեցակարգ է: Մինչ այսօր բազմաթիվ գիտնական–դիդակտներ զբաղվում են այս խնդրով:

Վերջին ժամանակներս շատ հեղինակներ հակված են, որ ուսուցման մեթոդը հանդիսանում է որպես ուսուցման կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման միջոց։

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ ավելի ու անելի դժվար է դարձել երեխաներին ստիպել գիրք կարդալ, այդուհանդերձ գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի։ Աշխարհը արագ փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի շատ վիրտուալ, այդ պատճառով տեքստի հետ աշխատելու մեթոդները նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին, պիտի հիմք հանդիսանան ընթերցանության խթանման համար։

Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են։ Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցման այստեղ ինտեգրվող համակարգ է։ Այսպես, օրինակ, մայրենի լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ։ Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից։ Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը. Ստեղծվում է բարձրամշակույթի լեզվական միջավայր։ Ընթերցանության տեքստերը մեծ հնարավորություն են ընձեռում դպրոցական բառապաշարի հարստացման համար։

**Ինտերակտիվ ուսուցմամբ հաշվի են առնվում՝**

- Աշակերտների կարիքները
- Գիտելիքների նպատակային ճշգրտումը
- Համագործակցությամբ լավագույն արդյունքների հասնելը
- Անկախության և ազատության ընտրությունը
- Սեփական գործունեության վերլուծություն։

## ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՏՈՆ

Շվեյցարիայում Բազելի գրադարանային հիմնադրամը կազմակերպում և անցկացնում է տպավորիչ տոն գրքերի հետ «Մանկական գրականության ավտոբուսով»: Ամբողջ տարի գրքերով և խաղալիքներով լի ավտոբուսը այցելում է թաղամասի գրադարաններ և կենտրոններ, խաղահրապարակներ, զբոսայգիներ և հանրային լողավազաններ: Ընթերցանության հմուտ անիմատորները մինչև 12 տարեկան երեխաների համար կազմակերպում են հատուկ և հետաքրքիր հանդիպումներ գրքերի հետ: Սկսնակ փոքրիկ ընթերցողներն իրենց առաջին գրական փորձը ձեռք են բերում բանաստեղծությունների և պատմվածքների միջոցով:

Հետազոտության արդյունքում կիրառված մեթոդները.

1. Հիշողության քարտեզ
2. Մտքերի տարափ
3. Միասին սովորել
4. Տեքստի բառարան կամ Գլոսս

**Հիշողության քարտեզ** մեթոդը մտորումների, գաղափարների, զրույցների ձայնագրման պարզ տեխնոլոգիա է: Ձայնագրումը կատարվում է արագ: Կենտրոնում թեման է՝ սկզբում ծագում է բառը, գաղափարը, միտքը: Այնուհետև սկսվում է գաղափարների հոսքը, որոնց թիվն անսահմանափակ է: Մեթոդը կիրառելի է ինչպես մեկ աշակերտի, այնպես էլ մեկ խմբի համար:

**Մտքերի տարափ** մեթոդը գիտահետազոտական մեթոդ է, որն օգտագործվում է նոր գաղափարներ «արտադրելու», գիտական և գործնական խնդիրների լուծման համար: Սրա նպատակն է ստեղծել կոլեկտիվ մտածողության գործունեություն՝ խնդրի լուծման ոչ ավանդական ձևերի որոնման համար:

**Միասին սովորելը** մի մեթոդ է, որի կիրառման ժամանակ ուշադրության կենտրոնում է խմբի ընդհանուր նպատակը: Խումբը հասնում է ցանկալի արդյունքի, եթե յուրաքանչյուր անդամ ունենում է իր ներդրումը: Յուրաքանչյուրն աշխատում է ինքնուրույն, բայց համագործակցելով խմբի մյուս անդամների հետ:

**Գլոսս**-տեքստի բառարանը սովորողներին առաջադրում է բառերի խումբ: Նրանք պետք է ընդգծեն այն բառերը, որոնք կապված են տեքստի հետ և հիմնավորեն՝ ինչու՞:

Այս մեթոդների կիրառումը թույլ է տալիս լուծել ներքոնշյալ խնդիրները.

- Աշակերտների կողմից ուսումնական նյութերի ստեղծագործական յուրացում
- Տեսական և գործնական գիտելիքների փոխհամաձայնություն
- Սովորողների կրթական և ճանաչողական գործունեության ակտիվացում:

Փաստացի խնդրի լուծման վրա ուշադրության և մտավոր ջանքերի, կենտրոնանալու ունակության ձևավորում

**Ակնկալվող արդյունքը**

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը առավել դյուրին կդարձնի տեքստի հետ աշխատելը, աշակերտները կկարողանան թափանցել տեքստի «խորքը», կհասկանան ենթատեքստը, նրա բովանդակությունը, կարտահայտեն սեփական վերաբերմունքը տեքստի վերաբերյալ, կկատարեն եզրահանգումներ:

**Առաջադրված տեքստը**

Կրծողները կենդանիների խումբ է՝առաջնային սուր ատամներով, որոնք աճում են ողջ կյանքի ընթացքում: Իրենց ատամների օգնությամբ այս կենդանիները կրծում են սնունդը, հողի մեջ փորում անցքեր ու բներ: Կուղբերը կարողանում են կրծոտել նույնիսկ ծառերը, որոնցով նրանք կառուցում են ջրային պատնեշներ՝ պատսպարելով իրենց բները:

Երկու հազար և ավելի կրծողների թվին են պատկանում մկները, առնետները, կուղբերը(ջրշուն), սկյուռիկները: Երկրագնդի ամենամեծ կրծողը տարածված է Հարավային Ամերիկայում: Դա կապիբարան է կամ այլ կերպ օդային խոզուկը: Նա նման է հսկա ծովային խոզի, որի երկարությունը 125 սմ է, քաշը՝ 45 կգ: Ամենափոքր

կրծողը եվրոպական դաշտամուկն է, որի երկարությունը չի գերազանցում 7սմ-ը: Կաթնասունների բոլոր հայտնի տեսակների մոտ կեսը կրծողներ են:

**Առաջադրված հարցերը տեքստի ընթերցումից հետո**

- ✓ Տեքստի տեսակը–գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական
- ✓ Տեքստի հիմնական թեման–կրծողների մասին
- ✓ Դու՛րս գրել վերնագիր, որն առավել քան արտացոլում է տեքստի բովանդակությունը.
  - ✓ ԿՐԾՈՂՆԵՐ
  - ✓ ԱՄԵՆԱՄԵԾ ԿՐԾՈՂԸ
  - ✓ ԿՈՒՂԲԵՐ ԵՎ ՄԿՆԵՐ
- ✓ Տեքստից դու՛րս գրել հատկանիշ+առարկա կաղապարով բառակապակցություն–ջրային պատնեշներ
- ✓ Տեքստից դու՛րս գրել հետևյալ բառերի հականիշները.
  - բութ–
  - քանդել–
  - տարբեր–
  - փոքր–
    - ✓ ՆՇԵԼ ԿՐԾՈՂՆԵՐԻՆ



Օգտվելով տեքստից՝ լրացնել աղյուսակը

| ԿԵՆԴԱՆԻՆԵՐ | ԻՆՉ ՆՈՐ ԲԱՆ ԻՄԱՑԱՔ |
|---|---|
| ՕԴԱՅԻՆ ԽՈՉ | |
| ԿՈՒՂԲ-ՁՐՇՈՒՆ | |
| ԴԱՇՏԱՄՈՒԿ | |

Աշակերտներին հանձնարարել

Հավաքել և մշակել տեղեկատվություն կրծողների մասին։

Ինչպե՞ս կիրառել վերոնշյալ ինտերակտիվ մեթոդները, ինչպե՞ս համադրել՝ դասը ճիշտ կազմակերպելու և այն նպատակային ու արդյունավետ դարձնելու համար։ Այս հարցի քննությունը դարձրել եմ իմ հետազոտության նյութը և փորձել եմ գտնել ուսուցչի և աշակերտի փոխգործունեության ճիշտ տարբերակը, որը պիտի ապահովի ուսուցման հիմնական խնդրի լուծումը։

Ուսուցիչը գրատախտակին գրում է դասի վերնագիրը՝ «Կրծողներ», որն արդեն ընտրվել էր տեքստի անմիջական ընթերցումից հետո առաջադրվող հարցերից։ Աշակերտները արդեն ծանոթ են դասի նյութին, կատարել են ուսուցչի հանձնարարությունը՝ համացանցից կամ հանրագիտական բառարաններից տեղեկություններ են դուրս գրել։ Այնուհետև գրում է գլխավոր հարցը՝ «Ի՞նչ գիտեմ կրծողների մասին»։

Մտքերի տարափ կամ մտագրոհ պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է։ Միտքը միտք է ծնում։ Ճիշտ հարցադրումները և մտքերի ազատ հոսքը զարգացնում է աշակերտի մտածողությունը, երևակայությունը, ձևավորում լսելու հմտություններ, համագործակցության հնարավորություն, ներշնչում համարձակություն, ինքնավստահություն։ Կիրառվում է խթանման փուլում։ Աշակերտներն անմիջապես արձագանքում են, մեկը մյուսի հետևից արտահայտում են իրենց մտքերը.

**Առաջին աշակերտ**–Կրծողները կենդանիների խումբ են։

**Երկրորդ աշակերտ**–Կրծողները իրենց ատամների օգնությամբ կրծում են սնունդը, որտեղից էլ ծագել է տեսակի անվանումը։

**Երրորդ աշակերտ**–Կրծողներ են մկները, առնետները, կուղբերը, սկյուռիկները։

**Չորրորդ աշակերտ**–Կրծողներից ամենամեծը կապիբարան է։

**Հինգերորդ աշակերտ**–Կրծողներից ամենափոքրը եվրոպական դաշտամուկն է։

Աշակերտներից ոմանք լրացուցիչ տեղեկություններ են ներկայացնում իրենց կատարած հետազոտական աշխատանքից։

**Առաջին աշակերտ**–Կրծողները լինում են վնասակար և ոչ վնասակար։

**Երկրորդ աշակերտ**–Մացառախոզը նույնպես կրծող է և գրանցված է ՀՀ Կարմիր գրքում։

**Երրորդ աշակերտ**–Կրծողներից լեմինգների քանակը չորս տարին մեկ կտրուկ ավելանում է։ Այդ ժամանակ նրանցից շատերը հեռանում են կերով հարուստ նոր վայրեր փնտրելու, բայց երբ փորձում են անցնել գետեր և նույնիսկ ծովեր, նրանվց մի մասը ոչնչանում է։ Հետաքրքիր է նրանց ջուրը նետվելու ձևը. մարդիկ, տեսնելով նրանց ջրի մեջ նետվելը, կարծում են, թե գազանիկները փորձում են վերջ տալ իրենց կյանքին։

**Չորրորդ աշակերտ**–Գամբիական առնետի քաշը հասնում է 7 կգ և այն Աֆրիկայում օգտագործում են կերակրի մեջ։

Ուսուցիչը գրատախտակին գրում է կարևոր մտքերը։

Մտքերի տարափ փուլին մասնակցում են բոլոր աշակերտները։

Նրանք չեն վախենում արտահայտվելուց, իրենց սխալ կամ ճիշտ միտքը բարձրաձայնելուց։ Ոգևորությունն ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորությունը զարգացնում է նրանց պատմելու, մտքերը ճիշտ շարադրելու կարողությունը, ստեղծագործական երևակայությունը։ Աշակերտներից ոմանք նույնիսկ պատմում են իրենց կյանքում պատահած դեպքեր, մուլտֆիլմերից դրվագներ, որոնք առնչվում են թեմային։

Ինչպես նկատում ենք, մտագրոհի ընթացքում աստիճանաբար սկսել ենք կիրառել «Հիշողությունների քարտեզ» մեթոդը, այդ անցումը սահուն է և հստակ։Նախորդ մեթոդով թեմայի քննարկումը շարժում է աշակերտների գիտակցական և ենթագիտակցական մակարդակները։ Ճիշտ հարցադրումներով ուսուցիչը աշակերտին ուղղորդում է ինքնուրույն որոնումների, համադրումների, զուգորդումների։ Աշակերտները հիշում են թեմայում արծարծված նյութին առնչվող դեպքեր՝ձայնագրումով։ Դասարանի աշակերտները համակ ուշադրությամբ լսում են իրենց ընկերներին՝ արտահայտելով հուզախառն կարծիքներ, զգացումներ։

Հաջորդ փուլը «Միասին սովորել» մեթոդի կիրառումն է, որի ընթացքում ուշադրության կենտրոնում է խմբի ընդհանուր նպատակը: Մեկից հինգ հաշվարկով աշակերտները խմբերի են բաժանվում: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է տեքստում նկարագրված կրծողներից մեկի նկարը, առաջադրում նկարագրել և նկարել:

Խմբերն աշխատում են մեծ խանդավառությամբ: Նրանք նորից ընթերցում են տեքստը, իրենց հավաքած տեղեկությունները, քննարկում, գրում, ջնջում: Ակտիվ աշխատանքային ընթացքն իսկապես ապահովված է: Խմբերը հասնում են ցանկալի արդյունքի: Խմբի յուրաքանչյուր անդամ ունենում է իր ներդրումը: Նրանք աշխատում են և՛ անհատական, և՛ համագործակցելով: Աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը յուրաքանչյուր խմբի նկարածը և հավաքած տեղեկությունները փակցնում է գրատախտակին: Միասին քննարկելուց հետո գնահատում են խմբերի կատարած աշխատանքները: Ուսուցիչը հիմնավորված գնահատում է դասի ակտիվ աշակերտներին:

«Գլոսս» մեթոդի կիրառմամբ ուսուցիչը աշակերտներին մղում է ինքնուրույն որոնողական աշխատանքի, այլընտրանքային ընթերցանության: Նա գրատախտակին գրում է բառեր՝ առաջարկելով աշակերտներին ընդգծել այն բառերը, որոնց հանդիպել է տեքստում: Այնուհետև առանձնացնում է «ամենամեծ» և «ամենափոքր» բառերը, հանձնարարում տեղեկություններ գրել ամենամեծ ր ամենափոքր ջրային և ցամաքային կենդանիների մասին: Դասի հետաքրքիր ընթացքը և ճիշտ ընտրված ռազմավարությունը մեծացնում է աշակերտների հետաքրքրությունը՝ մղելով նրանց այլընտրանքային ընթերցանության, նոր գիտելիքների ձեռքբերման՝ առաջացնելով նոր աշխարհներ բացահայտելու գայթակղություն:

Անդրադարձ. «Ի՞նչ սովորեցի» հարցի միջոցով ուսուցիչը ամփոփում և աշակերտների հիշողության մեջ ամրակայում է նյութը:

- Սովորեցնել
- Դաստիարակել
- Զարգացնել

Սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար. դասի սահմանված նպատակը հաջողությամբ հաղթահարված է:

Դաստիարակչական՝

- հետաքրքրություն առաջացնել,
- արթնացնել հետաքրքրասիրություն,
- աշակերտներին մղել ակտիվության,
- սեփական վերաբերմունքն արտահայտել,
- արմատավորել, ամրապնդել հմտությունները,

Զարգացնող՝

- սովորել համեմատել,
- սովորել գլխավորն առանձնացնել,
- սովորել համարժեքները ստեղծել,
- զարգացնել աչքաչափը,
- զարգացնել մատների մանր շարժումները

Ուսուցումը և գիտելիքների յուրացումը պետք է իրականացվեն ակտիվ և ոչ պասիվ հենքի վրա:

Լավ ուսուցիչ լինելու համար հարկավոր է սիրել այն, ինչ սովորեցնում եք, և սիրեք նրանց, ում սովորեցնում եք: Վ. Կլյուչևսկի

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասի ընթացքում կիրառված մեթոդները, դրանց համադրումները, առանց անպատեհության, մեկը մյուսին հաջորդելով, նպաստեցին դասի ճիշտ և արդյունավետ կազմակերպմանը, զարգացավ աշակերտների մտածողությունը, հիշողությունը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, ստեղծագործական երևակայությունը: Ձևավորվեց ճկուն միտք, արտահայտվելու համարձակություն, ինքնուրույնություն: Կարևորվեց հատկապես աշակերտների կողմից հետազոտական աշխատանք կատարելու հմտության ձևավորումը:

Ես գտնում եմ վարկածը, որ տեքստի հետ աշխատելիս ինտերակտիվ մեթոդների կիրառումը առավել դյուրին, հաղթահարելի է դարձնում ընթերցանության ընթացքում ծագած խնդիրները, հաստատվում է:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


- Педагогика: учебник/ Л. П.Крившенко-2005г.
- Общая и профессиональная педагогика/ Соломахо П. Э. 2002г.
- Чтение. Работа с текстом. 3 класс/ Крылова О. Н.
- Выготский Л. С. Педагогическая психология
- Балаев А.А./ Активные методы обучения. М., 2006г.